ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2016 թվականի **թիվ 15** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում արտադրվող այն գյուղատնտեսական արտադրանքի եւ սննդի արդյունաբերության արտադրանքի անվանացանկի մասին, որի նկատմամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը գնային դիտանցում եւ մրցունակության վերլուծություն է իրականացնում»

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 95-րդ հոդվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի իրականացման նպատակով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում արտադրվող այն գյուղատնտեսական արտադրանքի եւ սննդի արդյունաբերության արտադրանքի անվանացանկը, որի նկատմամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը գնային դիտանցում եւ մրցունակության վերլուծություն է իրականացնում (կցվում է):

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային՝ մշակել եւ հաստատել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից Եվրասիական

տնտեսական միության անդամ պետություններում արտադրվող գյուղատնտեսության արտադրանքի եւ սննդի արդյունաբերության արտադրանքի գնային դիտանցում եւ մրցունակության վերլուծություն իրականացնելու մեթոդիկան։

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2016 թվականի փետրվարի 12-ի
թիվ 15 որոշմամբ

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում արտադրվող այն գյուղատնտեսական արտադրանքի եւ սննդի արդյունաբերության արտադրանքի, որի նկատմամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը գնային դիտանցում եւ մրցունակության վերլուծություն է իրականացնում[1]

I. Գյուղատնտեսական արտադրանք, որի նկատմամբ իրականացվում է բացթողման միջին գների դիտանցում եւ մրցունակության վերլուծություն

1. Հացահատիկային եւ լոբահատիկավոր մշակաբույսեր

ցորեն

աշորա

գարի

վարսակ

հատիկավոր եգիպտացորեն

[1] Անդամ պետությունները ներկայացնում են տեղեկություններ՝ վերոնշյալ գյուղատնտեսական արտադրանքի և սննդի արդյունաբերության արտադրանքի վերաբերյալ՝ պաշտոնական վիճակագրական տվյալների առկայության դեպքում:

լոբահատիկավոր մշակաբույսեր

2. Տեխնիկական մշակաբույսեր

արեւածաղկի սերմեր

շաքարի ճակնդեղ

3. Կարտոֆիլ եւ բանջարաբոստանային մշակաբույսեր

կարտոֆիլ

կաղամբ

գլուխ սոխ

սեղանի գազար

սեղանի ճակնդեղ

բոստանային մշակաբույսեր

4. Պտուղներ եւ հատապտուղներ

սերմիկավոր մշակաբույսերի պտուղներ

կորիզավոր մշակաբույսերի պտուղներ

հատապտղային մշակաբույսերի պտուղներ

5. Խաղող

6. Անասուններ եւ թռչուն

խոշոր եղջերավոր անասուններ

խոզեր

ոչխարներ եւ այծեր

թռչուն

7. Կաթ

8. Ձու

9. Լճաձուկ

II. Սննդի արդյունաբերության արտադրանք, որի նկատմամբ իրականացվում է բացթողման միջին գների դիտանցում եւ մրցունակության վերլուծություն

1. Տավարի միս

2. Խոզի միս

3. Ոչխարի միս

4. Թռչնամիս

5. Թարմ կաթ

6. Սերուցքային կարագ

7. Պանիրներ

8. Արեւածաղկի յուղ

9. Շաքարավազ

10. Ալյուր՝ ցորենի, բարձր կարգի

11. Մակարոնային արտադրատեսակներ

12. Բրինձ ծեծած

13. Ձուկ սառեցված

14. Վուշաթել

III. Պարենային ապրանքներ, որոնց նկատմամբ իրականացվում է սպառողական միջին գների դիտանցում եւ մրցունակության վերլուծություն

1. Տավարի միս (բացի առանց ոսկորների մսից)
2. Խոզի միս (բացի առանց ոսկորների մսից)
3. Ոչխարի միս (բացի առանց ոսկորների մսից)
4. Թռչնամիս (բացի առանց ոսկորների մսից)
5. Կաթ
6. Սերուցքային կարագ
7. Պանիրներ
8. Հավի ձու
9. Արեւածաղկի յուղ
10. Շաքարավազ
11. Ցորենի ալյուր
12. Մակարոնային արտադրատեսակներ
13. Բրինձ
14. Կարտոֆիլ
15. Կաղամբ՝ սպիտակագլուխ, թարմ
16. Գլուխ սոխ
17. Գազար
18. Սեղանի ճակնդեղ
19. Խնձորներ
20. Ձուկ